14123

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«01» 12 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0217-21

Ձեռնարկողը՝ ***«Մլ Մայնինգ» ՍՊԸ***
ՀՀ, ք. Երևան, Շիրակի փողոց, 74/16 հասցե

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի, Արաբկիր վարչական շրջանի, Ադոնցի 19/9 և 19/15 հասցեներում նախատեսվող արտադրական մասնաշենքը հասարակականի վերակառուցման և բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փողոց, 19/9 և 19/15 հասցեներ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 12 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0217-21
<01> 12 2021թ.

«Մլ Մայնինգ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի, Ադոնցի 19/9 և 19/15 հասցեներում նախատեսվող արտադրական մասնաշենքը հասարակականի վերակառուցման և բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Մլ Մայնինգ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փողոց, 19/9 և 19/15 հասցեներ

Ներածական մաս. «Մլ Մայնինգ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի, Ադոնցի 19/9 և 19/15 հասցեներում գոյություն ունեցող արտադրական մասնաշենքը վերակառուցել հասարակականի և կառուցել բազմաբնակարան բնակելի շենք:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, ա) ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները՝ N 22102021-01-0069, 0.33301 հա /ծածկագիրը՝ 01-003-0211-0047/ և N 22102021-01-0379, 0.09729 հա /ծածկագիրը՝ 01-003-0211-0046/, Երևանի քաղաքապետի 21.06.2021թ. N 2063-Ա որոշումը, Երևանի քաղաքապետարանի կողմից 29.07.2021թ. տրված N 01/18-07/1-U-14441-688 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն), Երևանի քաղաքապետարանի կողմից 08.07.2021թ. տրված N 01/18-Ք-936-42 քանդման թույլտվությունը: Հողամասը բաղկացած է երկու հողակտորից, ընդհանուր մակերեսը կազմում է 0.4303 հա: Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման և հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տատնվում են 1203÷1204 մետրերի սահմաններում: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Նախկինում տվյալ տեղամասում մինչև 70 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում՝ բեռնաթափվելով Հրազդան գետի հովտում, իսկ ավելի խորը տեղակայված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Նկարագրական մաս. Նախատեսվող բնակելի, հասարակական շենք-շինությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Կառուցապատման աշխատանքների համար նախատեսված հողատարածքի հարևանությամբ գտնվում են Ադոնցի և Գրիբոյեդով փողոցները, հասարակական և բազմաբնակարան բնակելի շենքեր: Ադոնցի և Գրիբոյեդով փողոցների անկյունային հատվածից ներս ընկած տարածքում առկա է 3-ից 5 հարկանի տուֆակերտ շինություն, իսկ փողոցների անկյունում, տարածքին կից գոյություն ունի նաև գազալցակայան՝ ինչը ենթադրում է 30մ անվտանգ հեռավորության պահպանում կառուցապատման համար: Դիտարկվող տեղամասի հարավ արևելյան հատվածում առկա է 16 հարկանի բնակելի շենք:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար, որտեղ տարածքի ռելեֆը հարթ է և ասֆալտապատ, բուսականությունը բացակայում է:

Հողամասը ծանրաբեռնված է չգործող արտադրական շինությունով, որի մակերեսը կազմում է 1969.8 ք.մ, և այն ենթակա է քանդման:

Շենք 1. /բնակելի համալիր/ Ապամոնտաժված հատվածում առաջարկվում է նախագծել 18÷19 վերգետնյա և 3 ստորգետնյա հարկերով շինություն, որտեղ նախատեսված բնակարանների ընդհանուր քանակը կազմում է 156 հատ, ավտոկայանատեղի՝ 111 հատ:

Առաջին հարկի փաստացի վերգետնյա հատվածի կառուցապատման մակերեսը (առանց կոնսոլային հատվածների) կազմում է 933.7 մ^2, իսկ առաջին հարկում վաճառքի կամ վարձակալման մակերեսը կազմում է 725.1 մ^2, բնակարանների վաճառքի ենթակա ընդհանուր մակերեսը տիպային հարկերում կազմում է 13411.6 մ^2 (ներառյալ պատշգամբները):

Գոյություն ունեցող շենքի ապամոնտաժվող հատվածի կառուցապատման մակերեսը կազմում է 709.8 մ^2, ընդհանուր օգտակար մակերեսը կազմում է 3235 մ^2, ընդհանուր շինարարական մակերեսը (ներառյալ 3 հարկ ստորգետնյա ավտոկայանատեղին) կազմում է 24122 մ^2:

Շենք 2. /գրասենյակային շենք/ Առաջարկվում է գոյություն ունեցող շենքի հյուսիս արևելյան հատվածը /սկսած կարանից/ ապամոնտաժել և պահպանվող հատվածի եռահարկ մասում ավելացնելով 3 լրացուցիչ հարկ, 1-ին հարկում լրացուցիչ առաջ գալով, իսկ 5 հարկանի հատվածում՝ ևս 2÷3 հարկ: Նախատեսվում է այն դարձնել գրասենյակային շենք 462 աշխատողների համար, որտեղ նախատեսված է նաև ավտոկայանատեղի՝ 6 ավտոմեքենայի համար:

Գոյություն ունեցող շենքի պահպանվող հատվածի կառուցապատման մակերեսը կազմում է 576 մ^2, ավելացվող հատվածի կառուցապատման մակերեսը կազմում է 144 մ^2, իսկ գոյություն ունեցող շենքի շինարարական մակերեսը կազմում է 2301 մ^2, ավելացված հատվածի շինարարական մակերեսը կազմում է 2013 մ^2, ընդհանուր օգտակար մակերեսը կազմում է 3235 մ^2:

Շենք 3. /միահարկ կոմերցիոն շինություն/ *Շենք3.*-ը իրենից ներկայացնում է *Շենք1.*-ին կից կոմերցիոն միահարկ շինություն՝ կանաչ հարթ տանիքով, որտեղ ստորգետնյա հարկերում նախատեսված է ավտոկայանատեղի:

Կառուցապատման մակերեսը /առանց կոնսոլային հատվածի/ կազմում է 155.4 մ^2, *Շենք 3.* և *Շենք 1.* -ի ընդհանուր վերգետնյա կառուցապատման մակերեսը կազմում է 1089.1 մ^2:

Շենքի ծավալատարածական հորինվածքը փորձ է արվել ներդաշնակեցնել գոյություն ունեցող շինության հետ, ինչպես նաև ընդգծել շինության անկյունային տեղակայման առանձնահատկությունը:

Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ կանաչապատ տարածքի մակերեսը անհրաժեշտ է նախատեսել ընդհանուր հողամասի 40% և ավելին:

Համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի ընդհանուր կանաչապատման մակերեսը կազմում է 0.1951հա, որում կանաչապատում 0.000 նիշում կազմում է 0.1721հա:

Ընդհանուր կանաչապատման մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին կազմում է 45.3%, իսկ 0.000 նիշում կանաչապատ մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին կազմում է 40%:

Երկու հողամասերի ընդհանուր մակերեսը՝ 3330.1+972.9=4303.0 մ^2:

Ընդհանուր կանաչապատման մակերեսը՝ 1951 մ^2 /ընդհանուր հողամասի 45.3%/:

Ընդհանուր վերգետնյա կառուցապատման մակերեսը՝ 1809.1 մ^2 /ընդհանուր հողամասի 42.4%/:

Շենքերի առաջին հարկերը հասարակական նշանակության են, շենքերի շքամուտքերը առանձնացված են հասարակական նշանակության սենքերից, բոլոր մուտքերը ապահովված են թեքուղիներով:

Բնակելի շենքի նկուղային հարկերում բնակիչների թվին համապատասխան նախատեսված են թաքստոցներ:

Մեքենաների մուտքը ստորգետնյա ավտոկայանատեղի երկկողմանի է՝ քողարկվող թեքահարթակներով:

Բնակելի շենքերի կոնստրուկտիվ համակարգը շրջանակակապային է: Պատերը նախատեսվում են իրականացնել փրփրապլաստով՝ երկկողմանի քողարկված միաձույլ երկաթբետոնով, արտաքինից երեսպատումը բազալտե և տուֆե սալերով: Ըստ պատվիրատուի ցանկության հնարավոր են նաև երեսպատման այլ նյութերի կիրառում, որոնք չեն հակասի ՀՀ գործող շինարարական նորմերին:

Ծածկերը նախատեսված են իրականացնել ե/բ միաձույլ սալերով, միջնորմները՝ պեմզաբլոկներով, գիպսաստվարաթղթով: Տանիքը հարթ է՝ համատեղված, ճկուն փաթթոցային ծածկույթով և կազմակերպված ջրահեռացումով:

Նախատեսվող բնակելի, հասարակական շինության հեռավորությունները մոտակա շենք-շինություններից պատկերված են շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում (այսուհետ՝ Հայտ) ներկայացված իրադրության սխեմայում:

Կառուցապատման ընդհանուր տևողությունը նախատեսված է 36 ամիս:

Շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական:

Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխածածկույթով,
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում,
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում,
- Շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն:

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոսորակում և խրամուղիներում կատարվում են «հետ-բահ» էքսկավատորով:

Յուրաքանչյուր շենքի պատող և կրող կոնստուկցիաների իրականացման համար ընտրված է աշտարակային կռունկ:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Բետոնը շին. հրապարակ է բերվելու պատրաստի վիճակում՝ բետոնատար մասնագիտացված տրանսպորտային միջոցներով, ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվելու են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում: Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի կամ սորուն նյութերի պահեստներ:

Նախատեսվող բնակելի, հասարակական համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ,
- Քանդման աշխատանքներ,
- Հողային աշխատանքներ,
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ,
- Պատեր և միջնապատեր,
- Տանիքային աշխատանքներ,
- Ներքին ինժեներական ցանցեր,
- Հարդարման աշխատանքներ,
- Երեսպատման աշխատանքներ,
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են հետևյալ շինարարական մեքենաները և մեխանիզմները.

Էքսկավատոր՝ 2հատ, բուլդոզեր՝ 1հատ, շարժական կոմպրեսոր՝ 1հատ, վերամբարձ ավտոկռունկ՝ 1հատ, աշտարակային կռունկ՝ 1հատ, տոփանիչ՝ 2հատ, գույքային կաղապարամած՝ 1կոմպլ., թրթրիչ խորքային էլեկտրական՝ 2հատ, փոխարկիչ թրթրիչների համար՝ 2հատ, եռակցման տրանսֆորմատոր՝ 2հատ, դակիչ ձեռքի էլեկտրական՝ 3հատ, ձեռքի էլեկտրական դուր՝ 3հատ, հղկող մեքենա՝ 3հատ, թրթրագլդոն՝ 1հատ, ավտոբետոնախառնիչ՝ քանակը հաշվարկով, ավտոբետոնատար՝ քանակը հաշվարկով, ինքնաթափ ավտոմոբիլ՝ քանակը հաշվարկով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսված հողային աշխատանքների իրականացման ժամանակ ընդհանուր հանույթը կազմում է 38500 մ^3, որից 5373 մ^3 հետագայում կօգտագործվի հետլիցքի համար:

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 50 մարդ, որից.

- Ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 5 մարդ,
- Արհեստագործներ և բանվորներ՝ 35 մարդ,
- Մեքենավարներ և օգնականներ՝ 10 մարդ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում և կանաչապատում, համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված «Բնակելի, հասարակական համալիր տարածքի բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, որի տեսակային և քանակական կազմը ստորև բերված է՝

- թխկի սրատերև կարմիր՝ 12 հատ
- գնդաձև իլենի՝ 25 հատ
- սյունաձև թույա՝ 19 հատ
- սակուռա՝ 6 հատ
- բարբարիս՝ 6 հատ
- ասպիրակ՝ 30 հատ
- ֆորզիցիա՝ 9 հատ
- խենոմելես՝ 21 հատ
- լաբոռնում անագիրատերև՝ 1 հատ
- եղևնի կովկասյան՝ 11 հատ
- սամշիտ՝ 254 մ
- ծաղկանոց՝ 62 մ^2
- սիզամարգ՝ 1951 մ^2

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացվելու են հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- ոռոգման ջրախնայող համակարգի անցկացում,
- համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո նշված տարածքում ծառատունկն իրականացվելու է ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացվելու է խնամքի աշխատանքներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգմնա հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուր կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով: Կանաչապատ տարածքի 1 մ^2-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է՝ 4-6 լ/մ^2: Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար գազոնների ոռոգման առավելագույն արժեքը կազմում է՝ n_6=0.006 մ^3/մ^2: Ոռոգման համար ջրապահանջը կազմում է 4097.1 մ^3/տարի:

Բնակելի, հասարակական շենքերի կառուցման շինարարության ընթացքում օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր՝ երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար (90մ^3/շին. ժամ. կամ 0.75մ^3/օր) և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար (1301.4մ^3/շին. ժամ. կամ 1.205մ^3/օր):

Բնակելի, հասարակական համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսված է իրականացնել համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից 27.07.2021թ. տրված N ՎՋ4151/2021 տեխնիկական պայմանի և 29.07.2021թ. տրված N ՄՇ/23040 գրության, ինչպես նաև գործող նորմերի և կանոնների համաձայն:

Շինարարական աշխատանքների ընթացքում բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից, համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Արտադրական մասնաշենքը հասարակականի վերակառուցման և բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման աշխատանքային նախագծի «Ջրամատակարարում և կոյուղի» բաժինն իր մեջ կներառի՝

- Արտաքին և ներքին ջրամատակարարում,
- Տարածքի ոռոգում,
- Արտաքին և ներքին կոյուղի,
- Անձրևաջրերի հեռացման հեղեղատար կոյուղի:

Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրվող ջրամիացման և ջրահեռացման նախագծին, տեխնիկական պայմաններին համապատասխան՝ ջրամիացման, հակահրդեհային հիդրանտի տեղադրման և գոյություն ունեցող կոյուղագծին միացման նախագծային լուծումներին համաձայն:

Համաձայն տեխնիկական պայմանի ջրամիացումն իրականացվելու է նախագծված տարածքի հարևանությամբ անցնող ջրագծից: Տարածքներով անցնող d=600մմ պողպատե ջրատարը համաձայն նախագծի շրջանցելուց հետո ջրամիացումը կատարվելու է Գրիբոյեդովի փողոցով անցնող d=400մմ թուջե ջրագծից /ջրի ճնշումը 0.8 մթն./: Ջրամատակարարումը շուրջօրյա է: Ջրաչափական հանգույցի և հակահրդեհային հիդրանտի տեղադրման կետերում կառուցվելու է դիտահոր: Հաշվի առնելով, որ ինքնահոս մատակարարվող ջրի ճնշումը 0.8մթն. է, ապա անհրաժեշտ է նախատեսել ինվենտորային պոմպ:

Համաձայն տեխնիկական պայմանի՝ կոյուղագիծը միացվելու է նախագծված տարածքի հարևանությամբ անցնող /Արղության-Գրիբոյեդով փողոցների խաչմերուկ/ d=300 մմ տրամագծի գործող կոյուղագծին: Կոյուղագծի միացման կետում կառուցվելու է դիտահոր:

Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր է կատարում:

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը կատարվելու է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում կտեղադրվեն անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն միանալով գործող քաղաքային ցանցին: Համաձայն տեխնիկական պայմանի՝ հեղեղատարը միացվելու է նախագծված տարածքի հարևանությամբ անցնող d=1000 մմ տրամագծի գործող հեղեղատարին: Հեղեղատարի միացման կետում կառուցվելու է դիտահոր:

Նույն ցանցով և կհեռացվի շենքի տանիքից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները: Ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիէթիլենե Ø200-300մմ տրամագծի խողովակներով:

Ներքին ջրամատակարարման ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենե Ø50-15մմ խողովակներով:

Նախագծով նախատեսվում է կենցաղային խմելու և հրդեհաշիջման միասնական համակարգ: Սառը ջրի համակարգից նաև սնում է տրվում օդորակման և օդափոխության սարքավորումերին: Սանիտարական բոլոր սարքերը տաք և սառը ջրամատակարարման համակարգից անջատելու համար տեղադրվում են համապատասխան փականներ:

Նախատեսվում է հակահրդեհային հիդրանտ արտաքին հրդեհաշիջման համար: Ներքին հրդեհաշիջման համար հարկերում՝ հակահրդեհային կանգնակների վրա, համապատասխան խորշերում տեղադրվում են հակահրդեհային արկղեր, որոնցից յուրաքանչյուրի մեջ կանգնակի վրա տեղադրում է փական հակահրդեհային ծորակով, ռետինե խողովակ, հրշեջ փող և 2

ձեռքի կրակմարիչներ: Հակակրդեհային ծորակները տեղադրվում են ելնելով յուրաքանչյուր կետում 1 ջրի շիթ ապահովելու պայմանից:

Շենքի կոյուղաջրերը կհեռացվեն միասնական ինքնահոս համակարգով՝ կանգնակների միջոցով: Սանիտարական սարքերի միացումը կանգնակներին նախատեսվում է իրականացնել թեք ճևավոր մասերով: Կանգնակները մոնտաժվում են հորաններում և պատերի մեջ փակ համակարգով:

Կոյուղագծի հանգուցային կետերում և անկյունների վրա նախատեսվում են դիտահորեր: Շենքից կոյուղաջրերը կլցվեն կոյուղու երկաթբետոնե դիտահորերի մեջ, որից հետո արտաքին ցանցով միացվում է տարածքում գործող կոյուղագծի դիտահորին՝ համաձայն տեխնիկական պայմանի: Արտաքին կոյուղագիծը նախատեսվում է իրականացնել պոլիթիլենե Ø150-200մմ խողովակներով:

Համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի բնակելի, հասարակական համալիրի էլեկտրամատակարարումն նախատեսված է իրականացնել կառուցվող ՏԵ-ի 0.4կՎ վահանի տարբեր հատոններից՝ մալուխային գծերով: Էլեկտրասնուցման միացման տեսակը՝ եռաֆազ, պահանջվող հզորությունը՝ 460 կՎԱ:

Բնակելի, հասարակական համալիրի գազամատակարաման համար ընկերությունը օրենքով սահմանված կարգով դիմել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը, համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ:
- Ջերմասառնամատակարարման համակարգերի շրջնառու պոմպերը նախատեսված են հաճախության կարգավորմամբ:
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում:
- Օդափոխության համակարգերի ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութորով:
- Օդորակման բարձր արդյունավետության համակարգի կիրառում:

Բնակելի, հասարակական համալիրում նախատեսված է հետևյալ օդափոխության համակարգերը.

ա) <u>Ավտոկայանատեղի</u>

Չջեռուցվող ավտոկայանատեղիների համար նախատեսված է մեխանիկական դրդմամբ օդափոխության համակարգեր: Ներածման սարքը տեղակայված է -4.20 նիշում գտնվող օդափոխության խցում և սպասարկում է ավտոկայանատեղիները: Ներածման համակարգը թարմ օդ է մղում ավտոկայանատեղիներ, որը տաքացվում է ձմռանը էլեկտրական եղանակով: Արտածման համակարգերը ապահովվում են օդի արտածումը ավտոկանայատեղիներից: Օդատարները պատրաստված են ցինկապատ թիթեղից: Ներածման և արտածման համակարգերը աշխատում են միաժամանակ:

բ) <u>Հասարակական մաս ±0.00 նիշում</u>

Հասարակական մասի համար նախատեսված են հինգ պահուստային օդատարներ, որոնք կառուցվում են միայն հորերում ապագա համակարգերի միացման համար:

գ) <u>Բնակելի մաս</u>

Բնակելի շենքի բնակարանների խոհանոցներից նախատեսված է բնական օդափոխություն: Խոհանոցներից նաև նախատեսված է արտածում տեղակայվող հովանոցներից, որոնց համար նախատեսված են օդատարներ, պատրաստված 0.7մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից: Սանհանգույցներից նախատեսված է մեխանիկական արտածում կանալային օդամղիչների միջոցով: Օդատարները պատրաստված են ցինկապատ թիթեղից:

<u>Ծխահեռացում /բնակելի մաս/</u>

Ավտոկայանատեղիների համար նախատեսված են հակահրդեհային օդափոխության համակարգեր: Ծխահեռացման համակարգերը սպասարկում են ավտոկայանատեղին հրդեհի ժամանակ, իսկ օդամղիչ համակարգով կոմպենսացվում է հրդեհի ժամանակ հեռացվող օդը: Օդամղիչը տեղակայված է -4.20 նիշում գտնվող օդափոխության խցում: Հրդեհի ժամանակ ավտոկայանատեղիների վերելակների նախասրահներում նախատեսված են օդի դիմհարներ, որոնք կարգավորվում են ըստ հրդեհի օջախի էլ. շարժաբերով ռեվերսիվ կափույրների միջոցով: Վերը նշված համակարգերը նախատեսված են հրդեհի դեպքում ծխահեռացման և մարդկանց ապահով տարհանման համար: Հրդեհի դեպքում անջատվում է ներածման, արտածման համակարգերը և անմիջապես միանում են ծխահեռացման օդամղիչները, որպեսզի ապահովեն մարդկանց տարհանումը այդ հարկից: Ավտոկայանտեղիում նախատեսված են տվիչներ թույլատրելի կոնցենտրացիայի գերազանցման ժամանակ օդափոխության համակարգերի ավտոմատ միացման, երբ նրանք որևէ պատճառով անջատված են, կամ վթարային իրավիճակներում ազդանշան հաղորդելու համար: Եթե օդափոխության համակարգերը չենք միանում, միանում են ծխահեռացման և դիմհարի համակարգերը: Աստիճանավանդակների և վերելակի հորանների համար նախատեսված են օդի դիմհարներ: Ծխահեռացման ծխատարները և դիմհարի օդատարները պատրաստված են 1.2մմ հաստությամբ սև թիթեղից: Ծխատարները և դիմհարները ներկվում են հրակայուն ներկով՝ 2 անգամ:

Ջեռուցում և հովացում /հասարակական մաս/

Հասարակական մասի ջեռուցման և հովացման համար նախատեսված են կասետային տիպի ֆանկոյլներ: Ֆանկոյլների համակարգը պոլիպրոպիլենային, երկխողովականի համակարգ է, իսկ հորերում կանգնակները մետաղական են: Յուրաքանչյուր հարկում մագիստրալ խողովակների միացման մասում նախատեսված են փականներ և ծախսի հաշվեկշիռ փական ջրի ծախսի կարգավորման համար: Յուրաքանչյուր հարկում մագիստրալ խողովակների վրա նախատեսված են դատարկման փականներ վթարային իրավիճակներում տվյալ հարկի խողովակներից ջրի դատարկման համար: Դատարկումը իրականացվում է դեպի կոյուղի: Ջեռուցման համար տաք ջուրը վերցվում է սեփական կաթսայատնից, իսկ հովացման համար սառը ջուրը կաթսայատան տանիքում տեղադրված չիլլերներից: Հովացման համակարգերի համար նախատեսված են երկու չիլլերներ, կոմպրեսորի հաճախականության կարգավորիչով և ձայնամեկուսիչ պատյանով: Չիլլերներից մեկը աշխատող է, իսկ մյուսը պահեստային:

Կաթսայատուն

Օֆիսների ջերմային ծախսերի ապահովման նպատակով ընտրված են ավտոմատացված ջրային կաթսաներ, որոնք համալրված են մոդուլյացիոն գազայրիչներով: Կաթսաները կարող են փոխարինվել ելնելով հեռանկարային օդափոխության համակարգերի ավելացումից: Նախատեսված է երկու կաթսա, որոնք աշխատում են միաժամանակ: 143.6 կՎտ պահուստային հզորության նախատեսված է հեռանկարային օդափոխության համակարգերի համար: Կաթսաները ընտրված են գումարային բեռնվածքի 65% չափով: Ըստ այդ պահուստային կաթսա նախատեսված չէ: Տաք ջուր ստանալու համար կաթսայատանը նախատեսված են ջրաջրային թերթավոր տաքացուցիչներ մեկ աշխատող և մեկ պահուստային 200 կՎտ հզորությամբ յուրաքանչյուրը:

Ծխագազերի արտանետում

Ընտրված կաթսաները ունեն փոքր աէրոդինամիկական դիմադրություն, որի շնորհիվ ծխագազերի արտանետումը ընտրված է բնական: Ծխնելույզների տրամագծերը ընտրված է ելնելով կաթսաների տեխնիկական բնութագրերի: Վառելիքի այրման համար օդաքանակը վերցվում է անմիջապես կաթսայատան սրահից, իսկ կաթսայատուն օդի մուտքը կատարվում է կաթսայատան պատուհանների և դռների վրա նախատեսված ճաղաշարերի միջոցով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը
1.	Շինարարական աղբ, այդ թվում քանդման աշխատանքներից առաջացած	IV	9120060001004	350 մ^3
2.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	3140110008095	33127 մ^3
3.	Տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001004	0.7 տ

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Բազմահարկ բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Շինհրապարակում շինաղբի կուտակումների կիրականացվեն հատուկ նախատեսված վայրում, անջրթափանց հարթակով և ծածկի տակ:

Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը կազմակերպվելու է բացառապես բազմահարկ բնակելի համալիրի տարածքի սահմաններում:

Շինանյութերի գնումը նախատեսվում է իրականացնել արտոնագրված մատակարարներից:

Շին. հրապարակում նախատեսվում է տեղադրել կոնտեյների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի սենյակ, հանդերձարան, պահակատնակ, բուֆետ, ինչպես նաև բիոզուգարաններ և փակ պահեստ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով,
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել մեքենայացման բազայում:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների: Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային հնվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտանետումներից:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով, լուսավորել տարածքը, տեղադրել պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի համաձայնեցմանը,
- նախատեսվող նոր կանաչապատվող տարածքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ,
- կանաչապատ տարածքների ոռոգումը նախատեսված է իրականացնել կաթիլային համակարգի միջոցով, ինչպես նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգման ջուր կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերումներ:

Բազմահարկ բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, Nox և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

4. Աղմուկի, թրթռումների և տատանումների մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 350 հազ. ՀՀ դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում՝ 1050 հազ. ՀՀ դրամ:

Պարճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Պաշտպանության», «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտե», ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
7. Վերջնական նախագծում հաշվի առնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն՝ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:
8. Համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից 29.07.2021թ. տրված N 01/18-07/1-U-14441-688 ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ զրոյական նիշում կանաչապատման տարածքի մակերեսը նախատեսել 40% և ավելի (առանց ստորգետնյա կառուցապատման):
9. Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերի՝ նախատեսվող արտադրական մասնաշենքը հասարակականի վերակառուցման և բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագիծը ենթակա է պետական համալիր փորձաքննության:
10. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մլ Մայնինգ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի, Ադոնցի 19/9 և 19/15 հասցեներում նախատեսվող արտադրական մասնաշենքը հասարակականի վերակառուցման և բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Վ. Վարդանյան